Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

- պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
- ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- **Share** — copy and redistribute the material in any medium or format
- **Adapt** — remix, transform, and build upon the material

Ցե. ՏԱՐԱԽՈՎՍԿԱՅԱ



# ՌԱԴԻՈ-ԲՐԻԳԱԴԱ

Փոխ. ԽՆԿՈ-ԱՊԵՐ



891.715
Տ-26

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

891.71 Ս.
Տ-26
2011-05
9048
1007
32527



Այգի, անտառ
կտրելով գիծ՝
շոգեշարժը
Թռչնի Թևով
անցնում է վը՜գգ...

Մեր բրիգադան,
մեր բրիգադան,
մեր բրիգադան

ԳՆՈՒՄ Է

ԿՈԼԽՈԶ:

Գնացքի սիրտը.
խփում է, խը՛փ,
Թփրտում, Թը՛փ,
դողդողում,

յեվ գնացքը
իր յետևից
այ Թե ինչ է.
ինչ Թողնում.—
Մեքենաներ՝
հնձող, կալսող.



բը՜ռռ... բը՜ռռ,
Ջրաղացներ—
ուրագ դարձող,
գը՜ռռ - գը՜ռռ.

վերևն ամպեր,
վոր տալիս են ձկան լող.
յեվ դաշտում գետ—
ծնկի նման ծալծլվող:

13 SEP 2013

5279





Մեր բեռ—բազած
ահա լոկ —
Նոր համազգեստ,
ուսափոկ,
տետրակ, մատիտ
գրչահատ,
մեջքի տոպրակ
մի-մի հատ,
վզկապ, նշան,
Թըմբ—Թմբուկ
յեվ Թմբկափայտ
մի լավ զույգ։







Արկղին մոտիկ
մի պառավ...
խուլ ականջը
ձայն առավ.
— ԼՍԵՑԵ՛Ք.
ԼՍԵՑ՛Ք.
ԼՍԵՑԵ՛Ք.

սիրտը գնաց
նվաղեց,
պառավը գլի
ճղավեց.
— հողը գլխիս,
ես ինչ բան...
այ դրացիք,
մենք կորանք,

գյուղ է յեկել
սատանան։

Փողն է ֆսֆսում,
այսպես խոսում.
— ԼՍԵՑԵ՛Ք.
ԼՍԵՑԵ՛Ք.
ԼՍԵՑԵ՛Ք.
Ցերևանն է ասում.





Ցերեկանն ասում է
հոկտեմբերիկներին,
ինչպես պահել
ճուտիկներին.
ինչպես ցանել
կողքեկողք
շարք. շարք,
մարգ, մարգ
գազար, բողկ.
Մաքուր պահել
վոտ ու ձեռք,
չփչացնել
թուղթ ու ներկ.

Ցերեկանն ասում է
պիոներներին,
ինչպես վարժվել
մարզանքներին,



Քայլերթեցինք
միասին.—
այ մեր յերգը
այդ մասին.

— ՀԵԾԵԼԱԶՈՐԸ
ԲՈՒԴՅՈՆՆՈՒ
ԼԱՅՆ ՓՌՎԵՑ
ՏԱՓԱՍՏԱՆՈՒՄ,

մենք Բուդյոննու
մարշի տակ
ուրախ ենք,
ուրախ գնում.



Դպրոցական աշակերտներ
բոլոր, բոլորն
իրենց հերթին,
հավաքվեցեն, դպրոցյական
միշտ պարտաճիր
ժամի յոթին։

բրիգադիրը
նրանց առաջ.
— Ընկերներ,
իբրև դաս,
պետք է իմանաք
պիոներական նակազ։



— Դուք միշտ այդպես,
ա՛յ ապրեր դուք—
նստարաններին
վաթսուն մանուկ
աչքեր փառած,
ականջ սրած,

Տղերք
յեկեք իրար ձեռք տանք,
տանենք
պիոներական
աշխատանք.

ունենք
պիոներական նակազ,
կատարենք
ավելին և վոչ պակաս։



Լուսամուտից
պատշգամբ,
պատշգամբից
պատ, կտուր.
չինի՛․ տղերք,
գործվենք...

ձեռքով, վոտքով
պինդ, ամուր։
Բայց կտուրն ել
Թեք է. թեք.
արևն ել խիստ
այրում է,

վեր նայեցեք
են բնին,
այնտեղ սարյակն
ապրում է.
Բարձր, բարձր,
ել հեռուն,



Ցեվ լավ կոկորդ
հրնչ—հնչուն.
Կը՛լ, կը՛լ աղբյուր
կարկաչուն.
յեվ աչք-լույսը

աննվազ,
յեվ ել սերտած
դասի պես
պիոներական
մի նակազ։



Մենք ռադիո
սիրողներ
մեր յետևից
դիլ վազքով
բարձրախոսներ են
գալիս

ապրանքատար
գնացքով.

Պլատֆորմ,
լույս, քամի,

կըտ-կը՛տ, քըտ-քըտ
Թը՛մբ—Թմբուկ.
մեր բրիգադին
հանդիպեց
պիոներական
մի խմբակ.





սավառնակն է
վրգվկում,
քամին ինչ է
պապաղել,
դես ու դեն է վազվզում.

Կտուրներին, պատերին
այ ձգված է անտեննա,
որ էդ ցանցաթելերով
ռադիոն հեռվից
մեզ ձայն տա.



ականջ, ականջ,
ես ի՞նչ կանչ.
այ թելերը յերգեցին.
լավ ե, լույսով մենք պրծանք,
իջնենք, հայդե
мեր գործին։

Գյուղը հավաք,
հավաք ե.
գյուղը նորի
փափագ ե.
Տեսեք, ահա
արկղիկ.
իր սև փողը
ունի փայլ,
արկղիկը խոսում ե
լեզուներով
այլ և այլ.





ինչպես լինել
քաղգրագետ,
չմնալ տգետ.
ինչպես մեծ Լենինին
աշակերտել,
նոր կյանք,
նոր կենցաղ
յերկրում կերտել։

Յերևանն ասում ե
բոլորին, բոլորին —
գյուղացուն, բանվորին,
մեծին ու փոքրին
հետևեք նորին,

Գրագետ դարձեք,
հառաջ գնացեք.
պարտադիր ուսում,
մեր սոցիալիզմի
յերկիրն ե ուզում։

---

Ե. ուշ ե հիմի,
12-ն ե ժամի.
ռադիո լսող,
քեզ գիշեր բարի.
եգուց իրիկուն,
խնդրեմ. շուտ արի.

ԳԻՆԸ 60 ԿՈՊ

5279

ՀՀ Ազգային գրադարան
NL0392394



Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна

Е. ТАРАХОВСКАЯ

# РАДИО БРИГАДА

ГИЗ. ССРА 1932 ЭРИВАН
Պետհրատ № 1963, Գրալիտ. № 7011 (բ)
Տիրաժ 4000 օրին. Պետհրատի պատվ. № 6487